



ԵՐԽՈՊԱՍ

Օ Ր Ա Գ Ի Ր Ը Ն Տ Ա Ն Ե Կ Ա Ն



Թ Ի Ի 26.

1863

Զ. ՀԱՏՈՐ



Ազատիկե ժառանգ-
ները :
(Վերջ):

Ատաստանի միջոցով, անանկ
չէ, ըսաւ Լըպլան: Բայց դա-
տաստանական քննութիւն մը
սուղ կը նստի, Պարոն բժիշկ-
եւ քու պաշտպանեալք, կար-
ծեմ, կնիքներուն, մուրհակ-
ներուն եւ արձանագիրներուն
ծախքը վճարելու ալ դժու-
արութիւն կը կրէ:

Ասիկայ կը նշանակէ, գո-
չեց ֆուռնիէ նեղացած, որ

անոր աղքատութենէն առիթ կ'առնուք իրեն դէմ
անիրաւութիւն ընելու:

Միայն մեր իրաւունքը պաշտպանելու կը գոր-
ծածենք, պատասխանեց Լըպլան հանդարտութեամբ:

Անանկ է նէ, օրինաց գործադրութիւնը ես կը
պահանջեմ, կրկնեց մէկէն երիտասարդը քաջասրը-
տութեամբ: Հանգուցեալն ինծմէ գեղեր, ամէն տեսակ
օգնութիւններ առած է, եւ երկայն ատեն զնիքը հո-
գացած եմ. իբրեւ պարտատէր՝ կ'ուզեմ որ պարտքին
վճարումն ապահովցուի, ասոր համար կը պահանջեմ որ
ամենայն ինչ կնքուի:

Գրիգոյ եւ իր կինը, որոնք արդէն շատ անգամ
խօսքին մէջ նետուիլ ուզած էին, աս որ լսեցին՝
բարձրաձայն սկսան աղաղակել: Պարոն Լըպլան ձեւ-
ով մը զանոնք հանդարտեցուց:

Անանկ ըլլայ, ըսաւ՝ Ժպտելով մը երիտասար-
դին դառնալով. ուրեմն, Պարոն բժիշկ, ձեր պա-
հանջմանց օրինաւորութիւնը ցուցնելու միջոցներ
ունիք. այսինքն թէ քանի անգամ հիւանդին այցե-
լութիւն ընելու գ ցուցումը, օգնութեանց ընկալա-
գիրները եւ գեղերու համար եղած ծախքին հա-
շուեգիրը:

Պարոն, պատասխանեց ֆուռնիէ շփոթած, բժիշկ
մ'ասանկ նախազգուշութիւններ չ'ըներ. կրնաք Վար-
դուհւոյն հարցնել:

Իրաւունք ունիք, կրկնեց Լըպլան ծիծաղելով,
դուք՝ իրեն համար կը վկայէք, անիկայ ալ՝ ձեզի համար
կը վկայէ. ասիկայ արդարութենէ պահանջուած փո-
խադարձ ծառայութիւն մըն է: Գժբախտութեամբ՝
ատեսաներու մէջ գթութեան ու երախտաբիտութեան
զգածմունքներն իբրեւ դատաստանական վկայութիւն
չեն անցնիր: Ուստի մինչեւ որ իրաւունքնիդ օրինա-
ւոր կերպով ցուցնէք, պէտք է որ յանձն առնուք որ
մենք ազգականութեամբ ունեցած իրաւունքնիս ի գործ
դնենք:

Այո, գոչեց Գրիգոյ, որուն մինչեւ նոյն ատեն
զսպուած բարկութիւնն աւելի սաստկացած էր. ու-
րովհետեւ կը բարձաք որ դատաստան ըլլայ, մենք
ձեզի դատաստանի նիւթ կը մատակարարենք:

Չեզի եւ ձեր պաշտպանելոյն, աւելցուց կինը:

— Օրինակի համար ձեր երկուքին ալ կը
հարցնենք թէ Տիւրէ խնայութեամբ ժողոված ստակն
ուր դրած է:

— Արծաթեղէններն ինչ ըրած է, որովհետեւ
արծաթեղէն ունէր. ասիկայ գիտեմ եւ տեսած
ալ եմ:

— Մանաւանդ որ մեր հօրեղբորորդւոյն մե-
ռած ատենը՝ տունն իրենք միայն կային:

— Պէտք է որ պակասաձը հատուցանեն:

— Թշուառականներ, պողաց ֆուռնիէ, աս
անզգամ կասկածին վրայ ինք իրմէ ելած, եւ ձեռքը
վեր վերցնելով՝ ուզեց Գրիգոյին վրայ յարձակիլ:

Վարդուհի՝ որն որ նոյն միջոցին ներս կը մտնէր,
իր առջեւը նետուեցաւ:

Թող տուր, թող տուր, պողաց Գրիգոյ, որն
որ ըստ պատահման հոն գտնուած բահով մը զե-
նաւորուած էր:

Գուն ալ զգուշացիր, խաբեբայ, աւելցուց կի-
նը կուռփով աղջկան սպառնալով. եթէ մէյ մը ձեռքս
կ'յնալու ըլլաս, կը տեսնես . . . :

— Ո՛հ, Աստուած սիրէք, եկէք, գոչեց Վար-
դուհի, որն որ բժիշկը քաշելու տանելու կը ջանար:

Երիտասարդը քիչ մը ատեն կը վարանէր. բայց վերջապէս դարձեալ ինք իրեն տէր ըլլալով, իր զրպարտիչներուն վրայ արհամարհական հայեցումով մ'արձակեց եւ աղջկան ետեւէն՝ անակէն դուրս ելաւ:

Երբ որ փողոցին դրան քովը հասան, մեկէն երկուքն ալ կեցան: Աւարդուհի արցունք թափելէն կարմրեցած աչուրները՝ Ֆուռնիէին դարձնելով, Ո՛հ, Պարոն, ըսաւ, իմ պատճառաւս կրածներնուդ ձեզմէ թողութիւն կը խնդրեմ, եւ բիւր անգամ ալ շնորհակալ եմ: Աղքատ աղջիկ մ'ըլլալովս, ձեզնի բան մ'ընելու կարողութիւն չունիմ. բայց գէթ բոլոր կենացս մէջ ձեր յիշատակը միտքս պիտի պահեմ:

Հիմակ ի՞նչ պիտի ընէք, Աւարդուհի, հարցոց երիտասարդը:

— Տակաւին բան մը չեմ գիտեր. հիմայ տրտմութենէս ու այլայլութենէս այնչափ տախնու վրայ եղած եմ, որ ամենեւին բան մը չեմ կրնար մտածել: Յուսամ որ մինչեւ վաղը աւելի ինք իրենս կու գամ: Մանրավաճառ կիներն աս գիշեր զիս ստուգիւ քովը կը պահէ . . . եւ ետքէն . . . ալ ետքէն կը նայինք, Աստուած մեծ է:

Ֆուռնիէ առանց պատասխան տալու անոր ձեռքէն բռնեց, աղջիկը կամացուկ մը նոյնը ճնշեց, եւ մնաս բարով ըսելով դուրս ելաւ:

Երիտասարդին սիրտը բարկութեամբ լեցուած էր: Բնակարանն որ մտաւ, խցին մէջ վեր վար այլապէս կը պտըտէր. եւ պարապ տեղ խեղճ ու թողեալ աղջկան օգնութիւն մ'ընելու հնարք կը մտածէր: Եթէ Տիւրէ կտակ մը ձգած է, կ'ըսէր ինք իրմէ, տարակոյտ չիվերցըներ որ լըսլան եւ Գրիգոյ զանիկայ անհետ ըրած են: Մէկալ կողմանէ ալ կրնայ ըլլալ որ կտակը մինչեւ հիմայ գտած չըլլան, ինչու որ հանգուցելոյն խօսքերէն անանկ կ'իմացուի, որ պահած է: Ագահը զուցած էր թէ Աւարդուհոյն մասը հանած է, ապսպրած ալ էր որ փնտռեն . . . : Սակայն բոլոր բոլոր յայտնածն աս էր. մահը թող չէր տուած որ աւելի բան մը զուցէ:

Երիտասարդը տեսակ մը տենդով տաքցած էր, եւ հազար ու մէկ ենթագրութիւններով միտքը տակնուվրայ կ'ըլլար: Իրիկունն եկած էր, եւ պատուհանին առջեւ գլուխը բազկացը վրայ կ'ընցընելով, ան կերպով՝ ինչպէս որ առաջին անգամ զինքը գտանք, տեսաւ որ մեռելին ազգականներն ու իրենց խորհրդատուն անոր այլեւայլ թղթերն ու ամենէն պատուական բաներն առած՝ դուրս ելան: Աչուրները նոյն փլիված անակին ու լքեալ պարտեզին վրայ տնկած՝ ասդին անդին կը նայէր: Աերջապէս պարտեզին ծայրն եղող ջրհորի մը վրայ սեւեռած մնաց: Աս տեսնելով, շուտ մը Տիւրէին զուցած ետքի խօսքերը միտքն ինկան: Պարտեզը . . . ջրհորին ետեւը . . . խոյակին առջեւ . . . : Ասոր վրայ մեկէն միտքն եկաւ որ մեռելին գաղանիքը հոն պիտ'որ ըլլայ:

Սաստիկ վստահութեամբ մը վառուած, անմիջապէս վար կ'իջնայ, բակը կ'անցնի, քիչ մը ճիգ ընելով՝ պարտեզին դուռը կը բանայ եւ ջրհորին քովը կը հասնի:

Ջրհորին կէս մը կործանած շրջանակէն՝ ասդին անդին լայն ճեղքուածներ կը տեսնուէին, փլած պատի կտորներով լեցուած: Ամէն ծակ ու ճեղքուած քննեց, փորելու ալ ջանաց, բայց բան մը չգտաւ: Միայն ջրհորին ետեւի դին, ճիշդ խոյակին տակը՝ տեղ մը կար, որն որ ամենեւին փնտրուած չէր, եւ հոն դուռու կոփածոյ քարը հաստատուն կեցած էր: Երկու երեք անգամ ջրհորին չորս կողմը դառնալէն եւ ներսի ու դրսի կողմն աղէկ մը զննելէն ետեւ, Ֆուռնիէ իր դիւրահաւանութեան վրայ սկսաւ ամբշնալ, որ մեռնելու վրայ եղող մարդու մը թոթոված ետքի խօսքերուն հաւատալով, ջրհորի մը մէջ ծածկուած գանձ մը կը փնտռէր: Ուստի վերջին անգամ մ'ալ նայելով, տեղն երթալու ճամբան բռնեց:

Ի վերայ այս ամենայնի ի՞նչ որ ալ ընէր, մտքին մէջ միշտ ահամայ կասկած մը կը մնար: Պարտեզէն դուրս ելլելու միջոցին, ետ դարձաւ եւ դարձեալ աղէկ մը ջրհորը, պատը, խոյակը քննեց նայեցաւ:

Սակայն եւ այնպէս, կ'ըսէր ինք իրեն, Տիւրէին ստորագրած տեղն աս է. բայց պատին քովը բան չկայ. խոյակին տակի կողմն եղող քարն անշարժ կեցած է:

Աս խօսքին յանկարծակի կեցաւ: Լաւ է, մտածեց. բայց պատճառն ի՞նչ է որ միայն նոյն քարն այնպէս հաստատուն մնացեր է:

Աս պարզ խորհրդածութեամբ նորէն ջրհորին քովն եկաւ: Գարձեալ աւելի մտադրութեամբ կոփածոյ քարը զննեց, եւ տեսաւ որ մօտ ատենները փոքրիկ կոպիճներով նոյնը չորս կողմանէ ամրացուած եւ պարապ միջոցները հողով լեցուած էին:

Անմիջապէս նոյն կոպիճներն ու հողերը մէկգի ըրաւ, քարը խախտեց եւ վերջապէս տեղէն վերցուց: Տակը խորութիւն մը կար, որուն մէջ շրջանակներով պատած արկղ մը կը կենար, զորն որ մեծ դժուարութեամբ դուրս քաշեց: Հանելու միջոցին՝ արկղը գետինն իյնալով, հնչիւնէն բաւական իմացուեցաւ թէ մէջն ինչ կայ: Ֆուռնիէ քարը յառաջուան գտնուած վիճակին մէջ տեղաւորեց, եւ բոլոր զօրութիւնը ժողվելով, մեծագին արկղիկը բնակարանը տարաւ:

Խուցը հասնելուն պէս՝ բանալու համար այլեւայլ փորձեր ըրաւ, բայց պարապ տեղ. ինչու որ ամուր կղզակով մը գոցուած էր՝ որուն բանիքը չունէր: Աերջապէս նստեցաւ եւ աչուրներն արկղին վրայ սեւեռած, սկսաւ պէսպէս խորհրդածութիւններ ընել:

Աս ձեռքն ինկած գանձն ի՞նչ պիտի ընէր: Նոյնն իրեն սեպհականելու գաղափարը եւ ոչ մտքէն անցաւ: Օրէնքն իրեն զԳրիգոյ կը ցուցընէր. բնական

արդարութիւնն ու իր յօտարութիւնը՝ Վարդուհին առջեւը կը դնէին: Անտարակոյս աս պիտ'որ ըլլար ան մասը՝ զորն որ կնքահայրը, ինչպէս որ մեռնելու վայրկեանն իմացուցած էր, աղջկան համար հանած էր: Իր վերջին կամքն ան էր, որ հօրեղբորորդին ժառանգութենէ զրկէ, որպէս զի իրեն՝ աղջկան տեղ բռնող Վարդուհւոյն ձգէ: Աս բաղձանքին վաւերական ձեւ մը տալու համար՝ միայն ժամանակը պահած էր. բայց գուցէ աս ալ եղած էր, վասն զի՝ ո՞վ գիտէ՝ կրնար կտակ ալ գրած ըլլալ, զորն որ Լուսին գտած ու անհետ ըրած ըլլար: Որովհետեւ այսպէսով արդարութիւնն ոտքի տակ առնուած էր՝ զՎարդուհին կողպտելու համար, Վարդուհին ալ ասոր գիմացը նոյն զէնքը չէր կրնար գործածել:

Թէպէտ եւ աս պատճառները խիստ համոզիչ կ'երեւային երիտասարդ բժշկին, սակայն մինչեւ երկրորդ օրն ինք զինքը մէկ կողմն որոշել չուզէր: Որովհետեւ խղճմտանքը կը բողբէր որ իւրաքանչիւր դէպք իրաւունք չունի իրեն պատշաճ երեւցածին համեմատ դատաստան կտրելու:

Բոլոր գիշերն աս մտածմունքներով անցընելով, քնանալ չկրցաւ: Երբ որ առտուն ծագեցաւ, ֆուռնիէ տակաւին նոյն բանին վրայ կը մտածէր. մէջ մ'ալ կամացուկ մը դրան զարնուիլը կը լսէ: Ա՛րթայ կը բանայ, եւ մէկէն աղջիկը գիմացը կ'ելէ:

Վարդուհին թողութիւն խնդրեց զինքն այնպէս կանուխ անհանգիստ ընելուն: Ֆուռնիէ զինքը հրամացուց եւ աղաչեց որ նստի:

Թողութիւն ըրէք, Պարոն, ըսաւ աղջիկը՝ դրան քովը ոտքի վրայ կենալով. վերջին մնաք բարովն ըսելու եկած եմ:

Ո՛ր պիտ'որ երթաք, ընդմիջեց ֆուռնիէ:

— Փարիզ պիտ'որ երթամ, ուր ինծի ծառայութեան տեղ մը գտնելու խօսք տուին:

— Ի՞նչ կ'ըսէք:

— Ի՞նչ ընելու է. այսպէսով գէթ ուրիշին ծանրութիւն չեմ ըլլար...: Միայն թէ ճամբայ ելլելէն յառաջ՝ ուղեցի հրամանոցը շնորհակալ ըլլալ եւ շնորհք մը խնդրել:

— Ի՞նչ շնորհք:

— Կնքահօրս ժառանգները ձեր աշխատութեանց վարձքը զլացան: Ասիկայ սրտիս մեծ ցաւ մըն է, հիւանդին ըրածնիդ՝ իմ խնդրելովս ըրիք...:

Ասոր վրայ մի խօսիք, ընդմիջեց ֆուռնիէ:

Չէ, պատասխանեց Վարդուհին. հիմայ ձեռքէս բան մը չեմ գար. բայց... ճամբայ չեղած... կ'ուզէի... կը յուսամ որ ձեզի տալ կրցած միակ յիշատակս չէք մերժեր:

Աս խօսքերն ամչնալով եւ թոթովելով ըսելէն վերջը՝ ծոցէն փոքրիկ ծրար մ'առաւ, բացաւ եւ մէջէն պղտիկ արծրթէ գաւաթ մը հանելով՝ անոր տուաւ:

Ասիկայ, ըսաւ, կնքամօրս պարգեւն է. կ'աղաչեմ որ չմերժէք, թէեւ փոքր բան է:

Երիտասարդին սիրան անոր ընծայելու կերպէն շարժելով, Վարդուհւոյն ձեռքը բռնեց եւ Ի՞նչ կ'ըսէիք, հարցուց, եթէ մէկէն ի մէկ զձեզ անանկ հարուստացրնէի, որ եւ ոչ մտքերնէդ անցած է:

Չիս, պատասխանեց աղջիկը, ապշած եղանակաւ մ'իրեն նայելով:

— Թէ որ հոս ձեզի համար գանձ մ'ունենայի:

— Գա՛նձ մը:

— Նայեցէք:

Եւ զինքը խցին մէջտեղը քաշելով, դեռ գետինը կեցած արկղը ցուցուց, եւ պատահած ամէն բաներն իրեն պատմեց:

Վարդուհին՝ որն որ իսկզբան դժուարաւ կրնար հաւատալ, խիստ մեծ ուրախութենէն ծունկի վրայ եկած՝ սկսաւ լալ: Քիչ մ'ատեն զարմացած՝ փոքրիկ արկղին նայելէն ետքը, աչուրները երիտասարդին դարձուց եւ գոչեց.

Ո՛հ, ուրեմն վերջապէս ձեր արժանաւորութեան համեմատ ալ երջանիկ պիտ'որ ըլլաք:

Ե՛ս, ըսաւ ֆուռնիէ, ետ ետ քաշուելով:

Գու՛ք, գու՛ք, կրկնեց Վարդուհին բորբոքած: Արկղը որ չքաւորութեան ձեզի պատճառած ներդրութիւն չէի իմանար: Ես արդէն աղքատութիւնը յանձն առած ըլլալով, այնչափ դժուարութիւն չեմ զգար: Բայց դուք ձեր աստիճանին վայելածը պէտք էք ունենալ: Ամէն առէք, Պարոն. բոլորը ձերն է, բոլորը ձեզի համար է:

Աս ըսելով, աղջիկն ուրախութեան արցունքներով արկղը վեր վերցընել եւ բժշկին ձեռքը յանձնել կ'ուզէր: Երիտասարդն իսկզբան զարմացած, ետքէն ի դուրս շարժած, շնորհակալութիւններով զինքն արգելել ուզեց:

Ո՛հ, մերժել չէք կրնար, շարունակեց աղջիկն աւելի շարժած: Ի՞նչ, աս գանձը ձեզի պարտական չեմ: Ա՛րթեմ որ ամէն մարդ գիտնայ, եւ ուրիշներէն յառաջ անոնք՝ որոնք ձեզի արդարութիւն ընել չուզեցին:

Ֆուռնիէ գոչեց որ ըսածն ըլլալու բան չէ. սակայն Վարդուհին զինքն ամենեւին մտիկ չըրաւ: Եւ պատուհանէն նոր ժառանգներուն դալը տեսնելով, վազեց գանոնք կանչելու: Բժիշկը զարհուրած, զինքը թեւէն բռնելով կեցուց, եւ պոռաց. Յաջող բախտով մը ձեռուրնիդ ինկած հարստութիւնը կորսընցընել կ'ուզէք:

Կորսընցընել, կրկնեց աղջիկը, ըսուածն առանց հասկընալու:

— Չէք կրնար գուշակել որ աս մարդիկն արկղը ձեր ձեռքէն կրնան յափշտակել:

— Ի՞նչպէս:

— Աս արկղը վրայ ունեցած իրաւունքնիդ կերպով մը չէք կրնար ցուցընել:

Վարդուհին դողդողաց, եւ ֆուռնիէին երեսը նայելով, Անանկ է նէ՛ իմն չէ, պոռաց:

— Ամենայն ինչ կը վիայէ որ կնքահայրնիդ նոյնը ձեզի համար որոշած է. սակայն օրէնքն ուրիշ ապացոյցներ կ'ուզէ:

Օրէնքը, կրկնեց աղջիկը. բայց ամէնքն անոր հնազանդելու պարտական են:

— Բաւական որ մարդուս սեպհական խիղճն այլազգ օրոշում մը չ'ընէ

Չէ, չէ, ըսաւ շուտ մը Աարդուհի, խիղճը կրնայ արգելել որ մեր իրաւունքն ի գործ չդնենք. բայց երբեք չիկրնար մեզի պարտքերնուս հակառակը գործել տալ: Բանը ծուռ հասկըցեր եմ եղեր. աս ստըկի գուժմարն իմն չէ, եւ ունեցած ուրախութիւնս երազ մըն է եղեր:

Ասոնք ըսած ատեն աղջկան գոյնն արտաքոյ կարգի նետած էր. բայց սրտին արիութիւնը չկորսընցուց: Ֆուռնիէ ալ անոր ըսած խօսքերուն ստուգութիւնը տեսնելով, միտքը փոխեց, եւ դարձեալ իր բնական ազնուական միտութեանց սկսաւ հետեւիլ: Աղջկան առանց խօսք մը զրուցելու՝ դնաց ժառանգները կանչեց, նօտար մ'ալ բերել տուաւ, եւ մեծագին արկղն անոր յանձնեց:

Անմիջապէս պզտիկ բանալիով մը, զորն որ Գրիգոյ մեռելին վզէն կախուած գտած էր, արկղը բացուեցաւ. եւ մէկէն ամենուն աչուրներուն առջեւն արծաթէ անօթներու մէջ խառնուած հազարաւոր ոսկեղդ դահեկաններ ելան: Գեղացին եւ իր կինն ուրախութենէն սկսան արցունք թափել: Աարդուհի եւ Ֆուռնիէ հանդարտ կեցած կը նայէին:

Նօտարն ամենէն յառաջ ստակը համրեց, որուն տակը թղթադրամներու ծրար մ'ալ գտաւ: Երբ որ ամէն բանին ցանկն աւնուեցաւ, ամբողջին գումարն երեք հարիւր հազար ֆրանկ ելաւ: Գրիգոյ ինք զինքը կէս մը կորսընցուցած, գողդողալով մը սեղանին մօտիկցաւ, պարապ արկղն առաւ, աղէկ մը թօթուեց: Փայտին ու աստառին մէջ պահուած թուղթ մ'ալ գտինն ինկաւ:

Ահաւասիկ ստրկի գումարին վրայ աւելցընելու բան մ'ալ, ըսաւ գեղացին, ինկած թուղթը նօտարին տալով:

Նօտարը կը բանայ, աչքէ կ'անցընէ եւ զարմանալու շարժում մը կ'ընէ:

Կտակ մը, կը գոչէ վերջապէս:

Կտակ մը, կը գոչեն ամէնքը:

Որով Պարոն Տիւրէ՛ իր Աարդուհի ֆէօրիոյ սանն իր ընդհանուր ժառանգը կ'ընէ, աւելցուց նօտարը:

Նոյն միջոցին չորս բերնէ այլեւայլ աղաղակ լսուեցաւ, զարմացման, ուրախութեան ու դժկամակութեան: Գրիգոյ կ'ուզէր թղթոյն վրայ նետուիլ եւ յափշտակել. սակայն նօտարն ետ ետ քաշուեցաւ: Երկու զրկուած ամուսնաց ձեռքէն ազատելու համար հարկ եղաւ սր բռնութիւն ընէ: Անոնք դուրս ելան ամէն մերձականերուն վրայ անէծքներ թափելով եւ սպանալիքներ ընելով: Շուտ մը լրպանին խորհուրդ

հարցընելու գացին. բայց անիկայ իրենց իմացուց, որ իրենց դժբախտութեան չէր կրնար ալ դարման մ'ըլլալ, եւ որպիսի եւ իցէ դատաստանաւ Տիւրէին ժառանգութիւնը ստանալն ալ կարելի չէր:

Ֆուռնիէին դալով, շատ չանցաւ՝ Աարդուհույն փեսան եղաւ: Այսպէսով խիստ մեծ երջանկութեամբ իրենց կեանքն անցուցին, իրարու միշտ եւ ամէն բանի մէջ ուղիղ խղճի համեմատ աղէկ խորհրդատու եւ նեցուկ ըլլալով:

Մ Բ Ո Ւ Ե Ս Տ Ա Վ Ա Ն

Անցեալ տարուան Դոկտոմբի համաշխարհակալ տարուան տից տեսարանին վրայ ընդհանուր տեսութիւն:

(Վերջ):

Նոյնպէս երեսունուերկուերորդ՝ այսինքն պողպատի գործուածքներու, դանակի, կտրոցի ու արուեստաւորաց գործիքներու բաժնին մէջ, առաջին ու նախապատիւ տեղն ունէր Անգղիա: Պիրմինկէմի կերտարաններուն մէջ շինուած պղնձէ օրինակներն ու պողպատէ գործուածքները շատ ազնիւ ու սքանչելի են. ընդհանրապէս Անգղիայի կտրելու գործիքներն իրենց նմանը չունին: Անգղիայէն անմիջապէս ետքը կու գայ Աւստրիա, որ տէրութեան Շգայեր քաղաքը շինուած խարտոցները, մանգաղները, կտրոցները, դանակներն ու զանազան արուեստաւորաց գործիքները քիչ գտնուելու կատարելութիւն ունին: Սղիրիայի մանգաղներն ալ բոլոր աշխարհքիս մէջ կը փնտռուին: Մօտերս ռազմաշինութիւնն ալ Աւստրիայի մէջ մեծ յառաջդիմութիւն ըրաւ: Վէնի գործապետին սուինի գործատունը, թէ մեծ քանակութեամբ եւ թէ ընտիր գործուածքով վաճառքներ յառաջ բերելուն համար, մեծ անուն ստացած է: Այս ու Վէրգայմ կերտարանապետներուն գործիքներու ժողովածոյքը թէ ընտրութեան եւ թէ գործուածքին կողմանէ տեսնելու արժանի էր: Առաջինին գործանոցը տարին 75,000, իսկ երկրորդինը 60—80,000 քերոց (բէպէ) կը շինէ:

Արուեստից տեսարանին անհամեմատ պերճ մասը կը կազմէր երեսունուերեքերորդ կամ պատուական քարերու, ազնիւ մետաղներու եւ ոսկերչաց գործուածքներու բաժինը: Աս բաժինն իր վաճառքներուն արժէքով՝ արուեստից տեսարանին բոլոր հանդէս հանուած ապրանքը կը գերազանցէր եւ ծախու կ'առնէր: Ըստ մասին Հնդկաստանի եւ ըստ մասին եւրոպական կերպով յղկուած պատուական քարերու ժողովածոյք մը տեսքի հանած էր Գրնան Գաղղիացին: Թէպէտ նոյն ժողովածոյքը արուեստէ հասկըցողներուն մեծ հետաքրքրութիւն պատճառեց, սակայն հասարակ ժողովրդեան աչքը կը յափշտակէին ան սխրալի մեծութեամբ ու հազուագիւտ գեղեցկութեամբ պատուական քարերը, որոնք արուեստ

տից տեսարանին զարմանալիքներէն մէկն էին, եւ որոնց վրայ ծանօթութիւն ունենալը մեր ընթերցողաց ալ բաղձալի պիտ'որ ըլլայ: Ասոնց վրայ ամէն մարդ տեղեակ ըլլալու կը բաղձայ, որովհետեւ կարծես թէ անոնց մէջ մագիչ զօրութիւն մը կայ, որմէ այնչափ դարերէ վեր մարդկային ազգը բռնուած է, եւ որն որ այնչափ բանաստեղծներուն աշխոյժը վառած է:

Աս ծանրագին քարերուն մէջ առաջին տեղը կը բռնեն երեք ազամանդներ, որոնց առաջինն է Քիոն-Տի նուր (Lithonit) անուանեալ ազամանդը: Նոյնը 1851ին արուեստից տեսարանին մէջ տեսնողը աս անգամ չէր ճանչնար: Վասն զի Տիմայ իրօք լուսոյ լեռ մը եղած էր, որ անունը յառաջագոյն միայն փոխառութեամբ վրան կը կրէր: Ով որ զանիկայ պատող անթիւ անհամար բազմութեան մէջէն անցնելով քովը կ'երթար, անմիջապէս ցոլացող ճառագայթ մը աչքը կը շացընէր: Քիոն-Տի նուր ապարանջանի ձեւով տեսութեան դրուած էր, քովն անմիջապէս դրուած էր 1851ին ունեցած ձեւին ապակեայ օրինակը: Նոյն ժամանակ 196 կերատ կը կշռէր, բայց այնպէս գեշ կտրուած էր, որ Տաղիւ Տասարակ վանակնի ճառագայթացումն ունէր. բայց ասկէ վրան ձեղքեր ու պակասութիւններ ալ կային: Ուստի Անգղիայի թագուհին՝ երեւելի արուեստաւորաց խորհուրդ Տարցընելէն ետեւ, նոյն ազամանդը յղկել տուաւ Ամսդերտամէն բերուած գործաւորներու, որոնք իրենց գործքն արուեստից տեսարանին բացուելէն քիչ ժամանակ յառաջ լմրնցուցին: Հիմայ պատուական քարը ճիշդ շողակնի (պլանտին) ձեւ ունի. եւ թէպէտ միայն 102½ կերատ կը կշռէ, սակայն ան եղած է, ինչ որ յառաջագոյն չէր. այսինքն՝ լուսոյ ցոլացող լեռ մը, ան առասպելական ազամանդին նման, որուն լուսաւորութիւնը խալիֆին կանթեղի տեղ կը բռնէր, ու աշխարհքիս Տզօր թագուհւոյն եւ ծովու դշտոյն կուրծքը զարդարելու արժանաւոր գոհար մը: Քիոն-Տի նուր Հնդկաց թագաւորներուն էր, եւ չորեքտասաներորդ դարէն վեր զանազան աշխարհակալներու ձեռքն անցաւ, մինչեւ որ Անգղիացիք Բենձապ գաւառը նուաճելով՝ Հնդկաստանի ընկերութեան ձեռքն անցաւ, որն որ նոյն Անգղիայի թագուհւոյն պարգեւեց:

Ասոր ընկերը Գոսդէր ակնավաճառին գոհարներուն մէջն էր: Ասիկայ անոր համար երեւելի է, որ Պրագլիա գտնուող ազամանդներուն մէջ ամենէն մեծն է. ամէն միւս երեւելի ազամանդները Հնդկաստան գտնուած են: Ասիկայ յառաջագոյն 254 կերատ կը կշռէր, բայց յղկուելէն ետեւ կշիռը 125 կերատի իջաւ. որով թէպէտ Քիոն-Տի նուրէն մեծ է, սակայն անոր մաքուր ջուրը չունենալուն համար, այնչափ ծանրագին չէ: Երրորդ ազամանդն էր Նասսապ ըսուածը, 78⅔ կերատ ծանրութեամբ, որն որ Ուեստմինսթըրի հարուստ մարգիզինն է: Վերջի-

շեալ ազամանդն երեւելի է մաքուր ջրոյն ու արտաքոյ կարգի շողաւոր ըլլալուն համար: Հնդկաց ցեղն մը դէմ մղուած պատերազմի մը ժամանակ, Հասդինկա Լորար նոյն աւար առաւ. եւ շատ մարդիկներու ձեռքէն անցնելէն ետեւ, վերջապէս Ուեստմինսթըրի մարգիզը գնեց: Միւս անթիւ անհամար չքնաղ ու զարմանալի պատուական քարերուն մէջէն կը յիշատակենք՝ զմրուստ մը, 100,000 լիւս սղեւոյն արժէքով, որն որ ժամանակաւ Ռուսիոյ Սինդին (Բենձապի առեւծին) փաթթոցը կը զարդարէր. քանի մը մարգարիտներ, որոնց ամէն մէկուն գինը 10,000 ֆնէ կը համարուի, եւ վերջապէս միակտուր տպագրոն քարէ քանդակուած ու ոսկեով պատած գաւաթ մը:

Երեսուներորորդ բաժնին կամ ապակեղէն ապրանքներուն համար՝ կրնանք ըսել որ մինչեւ Տիմայ եղած ամէն փորձերուն հակառակ՝ ապակի շինելու արուեստը բուն նախնական կատարելութեան հասցընելն անկարելի եղած է: Վենետիկցոց ապակի շինելու արուեստը կորսուած է, եւ Միջին դարու պատուհանի ապակիներուն կատարելութեան մինչեւ Տիմայ մէկը չկրցաւ հասնիլ: Հռոմացոց պատմագիրներուն մէջ կ'աւանդուի նաեւ՝ որ ապակիէ գաւաթ մը կար, որն որ կրնար ծոխ ու դարձեալ շիտուիլ: Ապակեշինութեան արուեստին Եւրոպայի մէջ ըրած շրջանը եւ մանաւանդ զանազան տեղեաց նիւթերուն՝ ապակեշինութեան վրայ ունեցած ազդեցութիւնը, արուեստից տեսարանին մէջ աւելի ակնբերել կը տեսնուէր: Ապակի շինելու արուեստը Վենետիկէն՝ Պոհեմիա ու Գերմանիա անցաւ, անկէ՝ Գաղղիա մտաւ, ուսկից Անգլիա փոխադրուեցաւ: Վենետիկ Տիմայ իյնալու վրայ է, իսկ անոր հակառակ Պոհեմիայի ապակեղէն ապրանքները՝ ամենէն աժանը, թեթեւն ու դիմացկունն են, միայն աղէկ չեն ոսկեզօծուիր: Վանապակոյ (crystallin, պիլլօ) մենալաճառութիւնը տասնուհինգ տարիէ վեր Անգլիա ունի: Գոֆէրիէ ու Տիտրոն Գաղղիացիները Տիմ ժամանակուան նկարչութեան կատարեալ ու ճիշդ նմանութիւններ տեսքի հանած էին, որոնք շատ սքանչելի արուեստով ու յաջողութեամբ գլուխ տարուած են: Նիգոյ Գաղղիացին Բոմբէյանեան գունաւորումը ապակիէ պատուհաններու վրայ գործածած է:

Երեսուներորորդ բաժնին մէջ հանգէս հանուած էին խեցեղէն ամանները, հասարակ աղիւսէն սկսեալ՝ մինչեւ ամենէն անիւ ձենապակեայ (porcelaine) սպասները: Սէվը քաղաքին կայսերական ձենապակեայ գործանոցը թէ ընտիր գործուածքին եւ թէ գեղեցիկ ձեւերուն կողմանէ զամենը կը գերազանցէ. իսկ Վիեննայի ձենապակեայ գործանոցն աւելի պղտիկ արձաններ շինելու մէջ յառաջացած է. ասոր դիմացը կրնար ելլել Ֆիշէր գործապետին Մաճառիստանի Հերէնտ քաղաքն ունեցած գործա-

տունը, որն որ գաղղիական ու ճաբոնական ճենապակիին նմանցընելու արուեստը շատ յարողութեամբ վաստակած է:

Երեսունուվեցերորդ բաժնին մէջ կրնային տեսնուիլ ան ամէն բաները, որոնք միւս բաժիններէն դուրս էին. ինչպէս փայտէ ու կաշիէ շինուած պարգեւի գործուածքներ, սնտուկ, ճամբորդութեան հարկաւոր եղած բաներ, ու ծուխ քաշելու կազմածք: Անդղիա աւ բաժնին վերաբերեալ գործուածքներուն հաստատութեան ու դիմացկունութեան մէջ, իսկ Գաղղիա ճաշակի ու աժնութեան մէջ երեւելի է: Աիէնայի փայտէ կահերն ու թիթեղէ զարդերն ալ աղէկ ընդունելութիւն գտան եւ ըստ մեծի մասին ծախուեցան: Բրուսիա արեւելեան ծովէն ամենէն ընտիր սաթ տեսքի հանած էր: Մեծ զարմանք պատճառեցին նաեւ սաթէ շինուած զարդերը, Ափրիկէի ու Արեւելքի համար. ուր քարացած ձիւթը, պատուական քարէն աւելի յարգի է:

Ասով միանգամայն անցեալ տարւան Լոնտոնի արուեստից տեսարանին տեսութիւնը կը գոցենք. եւ կը յուսանք որ մեր ընթերցողները քանի մը նոր ծանօթութիւններ ու գազափարներ ստացան: Արուեստից տեսարանները՝ մեր դարուն ծնունդներն են. բոլոր Հին ու Միջին դարերու ազգաց պատմութեան մէջ ասոր օրինակը չենք գտներ: Մարդիկնեւրուն ցրուելէն մինչեւ հիմայ հաղարաւոր տարիներու մէջ չեղաւ անանկ միաբան ու հասարակաց գործք մը, որուն գրեթէ բոլոր աշխարհքիս ազգերը մասնակից ըլլան: Ասոնց քաղաքակրթութեան վրայ ունեցած ազդեցութիւնն այնչափ մեծ ու ակներեւ է, որչափ հին աշխարհքը նոր աշխարհքէն տարբեր ու հեռու է: Աւստի եւ հիմակուան մարդիկներուն սրտանց ուրախակից կ'ըլլանք, որ ասանկ համաշխարհական հանդիսի մը մասնակից կամ հանդիսակից ըլլալու բախտն ունեցան:

Ք Ն Ա Պ Ա Տ Մ Ա Գ Ա Ն

Փիղ:

(Վէրջ):

Աս հազարն ու զօրաւոր անանոյն ուրիշ ամէն կենդանիներուն վրայ ունեցած զանազան առաւելութիւնները, ոչ որ կրնայ ուրանալ: Ստոյգ է՝ աղէկ շունն իր զարմանալի հաւատարմութեամբն ինք զինքը տիրօջ համար զՏ կ'ընէ. ձին մարդուն ամէն վտանգներուն եւ աշխատութեանց մասնակից կ'ըլլայ. եղն ու կովը իրենց նուազ ճարակին փոխարէն՝ մեղի իրենց աշխատութիւնը կը մատակարարեն ու զմեզ կը անուցանեն. կապիկն իր զուարճալի խաղերովը զմեզ կը զբօսցընէ: Սակայն աս ամէն կենդանիները փղէն որչափ ստորին աստիճանի մէջ կը գտնուին: Շունն ունեցածը միայն վարժութեամբ ու կրթութեամբ կը ստանայ. ձին մեր տնակիցն

ընէլէն յառաջ երկարատեւ ու տաժանելի աշխատութեանց կը կարօտինք. կովը մեր հնարագիտութեամբն ու ճարտարութեամբը միայն՝ վերոյիշեալ օգուաները կրնայ յառաջ բերել. իսկ կապիկն որչափ ալ զուարճալի կենդանի մ'ըլլայ, որչափ ալ միւս ամէն կենդանիներէն աւելի մեղի հետ մեծ նմանութիւն ունենայ, որն որ աւելի իրեն պատիւ է՝ քան թէ մեղի, միշտ յանդուզն, խորամանկ, խաբեբայ ու անշնորհակալու կենդանի մըն է: Միայն փիղն է, որ ամէն կենդանեաց առաւելութիւններն իր վրայ կը բովանդակէ, առանց անոնց պակասութիւններն ունենալու:

Փիղը մարդուն շատ հակում ունի, եւ շատ անգամ մասնաւոր անձանց վրայ սէր կը կապէ: Փիղ մը համար կը պատմեն, որ կաթնասուն տղու մը վրայ այնպէս սէր կապած էր, որ տղան լացած ժամանակ՝ զինքը պատճովը կը շոյր եւ դայեկի պէս զինքը կ'որրէր, որպէս զի լալէն դադրի: Փիղն իրեն բռնուելուն առաջին օրէն փղապանին հնազանդելու եւ անոր ուղածը կատարելու կը վարժի. փղապանը միայն նշանով իր կամբն անոր կ'իմացընէ. եւ անասունը քիչ անգամ աս նշաններուն հնազանդելու կը զլանայ: Իր անունը կանչուած ժամանակ՝ ձայն մը հանելով պատասխան կու տայ եւ տիրօջը քովը կու դայ, ինչպէս կ'ընեն շունն ու ձին: Բայց փղին աս անսացողութիւնը նոյն երկու անանոց հնազանդութենէն շատ աւելի է. փղապան մ'իւր փղին զանազան խոստումներ ընելով, զոր օրինակ անոր օղի խոստանալով, կրնայ ամէն իր ուղածը կատարել տալ:

Փիղն իրեն եղած բարիքը չիմուներ. ասոր փորձն առաւ Հնդկաստանցի զինուոր մը, որն որ քանի մ'անգամ փղի մը օղի խմցուցած էր: Նոյն զինուորն օր մը գիւնովութեան մէջ անկարգութիւն մ'ընելով՝ ոստիկանութիւնը զինքը բռնել ուզեց. սակայն զինուորը շուտ մը վերոյիշեալ փղին փորին տակ ապաւինեցաւ եւ հոն քնացաւ: Ոստիկանը հասնելով, զինքն անկէ հանել ուզեց, սակայն փիղն անոր դէմ դրաւ, եւ զինուորը պաշտպանեց, մինչեւ որ ոստիկանը յուսահատելով՝ հեռանալու ստիպուեցաւ: Աւրիշ փիղ մը նոյն իսկ սաստիկ կատաղութեան ատենն ալ, չմուցաւ ան պարտիզպանուհին, որն որ ամէն անգամ անոր առջեւէն անցած ժամանակ իրեն քիչ մը բանջարեղէն կու տար: Նոյն փիղն օր մը կապանքները խզելով՝ կատաղբար սկսաւ ճամբուն վրայ վաղել. ամէն դիմացն ելլողները սկսան փախչել, նոյն իսկ վերոյիշեալ պարտիզպանուհին: Գժբախտ կ'ինը նոյն շփութութեան մէջ իր աղան խանութին դրան առջեւը թող տուած էր: Կատաղի անասունը ճանչցաւ ան տեղի՝ ուր իր բարերարը կը նստէր, ուստի եւ աղան պատճովը բռնելով, խանութին յարկին վրայ դրաւ:

Ամենէն ետքը չենք կրնար անյիշատակ թողուլ փղի մը մեծանձնական մէկ գործքը, որով վայրկեանական կատաղութեան մը ժամանակ գործած մէկ յանցանքը քաւել ուզեց: Նոյն փիղը պահապանին իրեն տուած նեղութեանցը չիկրնալով դիմանալ, զանիկայ մեռցուց: Ասոր վրայ պահապանին կ'ինը՝ երկու որդիքներն առած:

անասնոյն առջեւ ելաւ եւ յուսահատական ու ցաւագին ձայնով մը պոռայ . Անասուն , որովհետեւ հայրը մեռցուցիր , հիմայ զմեզ ալ մեռցուր : Փիղը հանդարտութեամբ տղոցմէ երկցագոյնը պատճովը բռնեց , եւ կռնակը դրաւ : Ասով զինքն իր ապագայ տէրը ճանչցաւ եւ իբր թէ խոստացաւ իրեն ամէն բանի մէջ հնազանդիլ , ինչպէս որ ետքէն ճշդիւ ալ կատարեց :

Բայց ինչպէս որ իրեն եղած բարիքը չիմոռնար , նոյնպէս ալ իրեն եղած նախատանաց շատ զգայուն է , եւ շատ ժամանակ ետքն ալ անոր սիրը կը հասնէ : Ասոր փորձն առաւ զինուոր մը , որն որ նեղ փողոցի մը մէջէն փղին անցնիլն արգելած էր : Փիղը չկրնայով նոյն միջոցին իրեն եղած անիրաւութեան հատուցում ընել , խել մը ժամանակ ետքը նոյն զինուորը գետի մը եղերքը գտնելով , պատճովը բռնեց եւ քանի մ'անգամ ջրին մէջ խոթելէն հանելէն ետեւ՝ հանդարտութեամբ դարձեալ տեղը դրաւ : Ամենուն ծանօթ է թէ ինչ հատուցում ըրաւ փիղ մը ան դերձակին , որն որ ջուր խմելու դայած ատեն զինքը բարկացուցած էր : Ուրիշ փղն մը վրայ ալ կը պատմուի , որ իր վրայ նետուած ընկուզի կէղեւներն առանց մէկէ մը տեսնուելու՝ վերցուցեր պահեր է , եւ քանի մը որ ետքը զանոնք իր վրայ նետողին դուռը զարկեր է : Գաստելն մէջ անդամ մը փղապանը փղին համար որոշուած կերակուրը տալու մոռցաւ . փիղն անոր անձին փնաս չհասցուց , սակայն որ մը չուանը խղելով՝ պահապանին բնակարանը մտաւ , ինչ որ դտաւ՝ լափեց կերաւ ու բնակարանին մէջ գտնուած կարասիներն իր ախոռին մէկ անկիւնը տանելէն ետեւ , աղտոտեց ու վրան կոխուտելով կտոր կտոր ըրաւ : Պլուտարքոս կը պատմէ թէ փիղ մը նոյնպիսի կերպով վրէժ առաւ իր պահապանէն , որն որ իրեն համար որոշուած բրինձին մէջ ամէն անգամ քար ու հող կը խառնէր : Օր մը փիղը պատճին մէջ պահած տաղը՝ տիրոջը կերակրոյն մէջ թափեց : Ուրիշ հեղ մըն ալ նկարիչ մը փիղ մը պատիճը վեր բռնած դրից մէջ նկարել ուզելով , հարկ եղաւ որ նկարչին ծառան անասնոյն առջեւը նստած կենայ ու երբեմն երբեմն անոր բերանը պտուղ նետէ : Խեղճ անասունը երկայն ժամանակ նոյն դրից մէջ կենալէն յոգնելով , յանկարծ պատճին մէջէն նկարչին գլխէն վար ու պատկերին վրայ ցեխոտ ջուր մը թափեց ու բոլորովին աղտոտեց , որով եւ նկարչութեան վերջ տուաւ :

Փիղը զարդ ալ շատ կը սիրէ եւ անով մեծ զուարճութիւն կը զգայ : Անոր համար Հնդկաստանցիք վրան նկարէն մորթեր , շղթայով կապուած բոժոժներ կը դնեն , ահաւաներուն վրայ ոսկիէ օղեր կ'անցընեն , եւ ասով իրենց ամէն ուզածը կրնան կատարել տալ :

Ասիայի ու Աֆրիկէի հարաւային կողմերը բնակող աղբերուն գլխաւոր զբաղմունքը փղորսութիւնն է , զորն որ զանազան տեղ զանազան կերպով կ'ընեն : Սիւսմ փղորսութիւնը հասարակօրէն ցցադարանով կ'ըլլայ : Աս դարանները ցցելով պատած ընդարձակ քառակուսի տեղեր են , որոնց մուտքը լայն է եւ երթալով կը նեղնայ , այնպէս որ հազիւ փղն մը լայնութիւնը կ'ունենայ :

Գարանը շինուելէն ետքը , որսորդներն էգ փղերու վրայ կը հեծնան եւ շրջանակ մը կազմելով՝ 50—100 փղէ կազմուած փղերամակ մը դէպ ի դարանը կը մղեն : Աս միջոցին որսորդներէն ոմանք կը սկսին փղերը դրգուել , եւ եթէ փիղը վրանին յարձակելու ըլլայ , ցցերուն ետեւը կը պահուրտին : Նոյն գործողութիւնը յառաջ կը տանին մինչեւ որ փղերէն մէկը ձանձրանալով՝ ցցադարանին մէջ մտնէ . որսորդները մուտքին առջեւը շուտ մը ցցեր դնելով՝ զանիկայ անոր մէջ կը փակեն : Բռնուած փիղը հանելու համար էգ փղեր կը գործածուին , որոնց վրայ որսորդները հեծած դարանին մէջ կը մտնեն , վայրենի փիղը չուանով կը կապեն ու իրենց կըթութեան տեղերը կը տանին : Տասնուհինգ օր բաւական է վայրենի փիղ մը ընտանեցընելու համար :

Փղորսութեան վախճանը զանազան աղբայ քով այլեւայլ է : Աֆրիկէցիք եւ մանաւանդ Քափրաստանցիք փիղը կ'որսան իր մսին համար , որ իրենց ախորժահամ կերակուր մը մատակարարէ : Հնդկաստանցիք զանիկայ կ'որսան իբրեւ բեռնակիր դրաստ ծառայեցընելու , հեծնելու , պատերազմներու մէջ օգնական ըլլալու եւ ասոնց նման ուրիշ ծառայութիւններ ընելու համար : Սակայն Հնդկաստանի մէջ կան տեղեր՝ ուր փղերը մեծ յարգ ունին . հոնտեղերը ճերմակ փիղ մը իբրեւ սուրբ բան կը համարուի :

Բ Ե Բ Ո Յ Ե Կ Ա Ն

Խմաստուն խեղաթիւն :

Քաղաքի մը մեծերը մօտաւոր գեղերը քանի մը պատուաւոր քաղաքացի խաւրեցին , որպէս զի նոյն քաղաքին այրած մէկ թաղին համար ողորմութիւն ժողովին : Ասոնք առտու մը գեղացւոյ տուն մը մտնելով , լսեցին որ տերը ծառային յանդիմանութիւն կու տար թէ ինչու համար առջի իրիկուն չուանը ներս չառնելով , գիշերուան անձրեւին տակ ձգեր է :

Հոն հոն , աս ինչ բռնող մարդ է , ըսաւ եկող քաղաքացիներէն մէկն իր ընկերներուն . առիէ անշուշտ բան մը չենք կրնար առնուլ :

Գոնէ կրնանք փորձել , պատասխան տուաւ ընկերներէն մէկը :

Ասանկով գեղացւոյն քովը մօտեցան : Անիկայ զերենք քաղաքավարութեամբ ու մեծ սիրով ընդունեցաւ , եւ իրենց գալուն նպատակն իմանալով , չէ թէ միայն անմիջապէս հաճութեամբ ստըլի մեծկակ գումար մը տուաւ , հապա նաեւ խոստացաւ որ այրողներուն փայտ եւ կերակրեղէն ալ խաւրէ : Քաղաքացիք ասոր վրայ մեծապէս զարմանալով , շնորհակալ ըլլալէն ետեւ՝ համարձակեցան իր վրայ ըրած գէշ դատումնին խոստովանիլ :

Պարոններ , պատասխանեց գեղացին ծիծաղելով , փոքր բաներու մէջ ալ զգուշութիւն ընելով եւ իմ ստորակարգեալներս խնայութեան ու կարգաւորութեան վարժեցընելով է , որ հիմայ կրնամ կարօտելոյ օգնութիւն ընել :

Բ Ա Ր Ո Յ Ա Վ Է Պ

Ա Մ Ա Յ Ի Կ Ղ Ջ Ի Ն

Մահուկին արևըներէն ընկղմած ատե- նը՝ գլխարկը կորսնցուցած էր. եւ աս կորուստն որչափ որ ալ մեծ բան մը չե- րեւայ բարեխառն գօտիներու մէջ ընա- կողներուն, սակայն արտաքոյ կարգի գէշ հետեւութիւն կ'ունենար Կոմիտիի համար. որովհետեւ արեւուն կեղեւ ճառագայթ- ներուն տակ անպատասպար մնալով, ցորեկն ամէն անգամ դուրս ելլելուն պէս սա- տիկ գլխացաւ կը կրէր: Հովտէն դուրս ելլելէն ետքը, բարիութենէն խուսված, արեգական ստորիչ ճառագայթներուն տակ բաց գլխով երկայն ատեն ծովեզերքը պտրտած էր: Բոլոր գիշերն առանց քնոյ անցուցած, եւ երկրորդ օրն այլը մտած ատեն՝ դժբախտ ընկերացը գիտինքը գտած էր:

Արդէն զգացած հիւանդութիւնը բա- նի տեղ չընելով, զանոնք թաղելու տխուր աշխատութիւնը յանձն առած էր: Բոլոր օրը նոյն ծանր գործքին զբաղած ատեն, ստեպ ստեպ սաստիկ սարսուռէ մը կը շարժուէր, թէեւ մէկ կողմանէ ալ ա- րեւուն այրիչ ճառագայթներէն արտաքոյ կարգի կը նեղուէր: Առաջին գերեզմանը փորելու համար շատ ժամանակ անցուցած էր, եւ աշխատութենէն տկարացած՝ այլը քաշուած էր: Բայց աւազի վրայ ձգուած ընկերացը տեսարանը՝ զինքը նորէն իր ծանր ու տխուր գործքին ձեռք զարնելու ստիպած էր:

Երկրորդ անգամ գործքի ձեռք զար- կած ժամանակը՝ արդէն այնպիսի վիճակի մէջ կը գտնուէր, որ չէր կրնար յուսալ թէ կարող ըլլայ գլուխ տանիլ: Նոյն միջոցին Փիլիպպոս իրեն օգնութեան հա- սաւ: Գտնուած վիճակին մէջ, նոյն օգնու- թիւնը չէր կրնար մերժել, մանաւանդ որ Փիլիպպոսին լուռ կենալուն վրայ սիրան այնպէս շարժած էր, որ շատ անգամ միտքը կու գար անոր շնորհակալ ըլլալ, երբ որ աչուքները վեր վերցնելով՝ ան ա- տելութեան հայեցուածքը տեսաւ, որուն վրայ վերը խօսեցանք:

Իր արտմալի խորհրդածութեանց մէջ ընկղմած ըլլալով, նոյնին պատճառը չէր կրնար թափանցել: Եթէ մտածած ըլ- լար որ թաղած գիտիլը նաւաստապետին մարմինն էր, գուցէ ինքն ալ Փիլիպպոսին միտքն եկած խորհուրդը կ'ունենար: Բայց լեշնամոյն թշնամութիւնը նորոգելուն պատճառը չգիտնալով, անոր արհամար- հական ու անարգական կերպով մը նայած էր. որուն դժբախտ հետեւութիւնը տե- սանք...:

Կոմիտի գիշերուան մնացած մասը՝ նստած դերեզմանին վրայ անցուց, որովհետեւ խիստ տկարութենէն անկից չկրցաւ ելլել: Հաղիւ արշաղոյր ծագելէն ետքը՝ շատ մեծ նեղութեամբ այլը մտաւ: Արտաքոյ կար- գի ծարաւ կը զգար, ուստի եւ ստիպու-

ած էր կամ Փիլիպպոսին բնակած հովան- երթալ եւ կամ ժայռին աննաղբերը: Բայց իր ատելի թշնամին չտեսնելու հա- մար, ետքինն ընտրեց, թէեւ ճամբան աւելի երկայն էր: Հոն աղէկ մը ջուր խմելէն ետ- քը՝ հետն առած կրկայն խեցի մ'ալ լե- ցուց, որովհետեւ կ'իմանար որ մէյ մ'ալ կարող պիտի չըլլայ ջուր խմելու համար հոն երթալ, եւ կամայ կամայ իր տխուր բնակարանը դարձաւ:

Նախընթաց օրուան սարսուռը սա- տիկ տեսիլի մը փոխուած էր: Հանդարտ քայլերով աւազի վրայ քիչ մը պտրտե- ցաւ, որուն վրայ արեւուն այրիչ ճառա- գայթները կը ցորանային: Տխուր մտած- մանքներու տակ ընկճուած՝ ամայի ու սոսկալի ժայռերուն կը նայէր, որոնցմով գրեթէ բոլոր կողին պատած էր. եւ ար- տասուալից աչուքներով զանոնք հօրը պարտեղին ու կանաչադարձ անտառակնե- րուն հետ կը համեմատէր:

Ալ զանոնք տեսնելը չունիմ, կ'ըսէր ինք իրեն. աս չոր ապառաժներուն վրայ պիտի մեռնիմ՝ առանց մէկէ մը օգնու- թիւն ընդունելու...:

Մտքին մէջ հետ զհետ հաղարաւոր կսկծեցուցիչ յիշատակներ կու գային: Հօրը դղելին շքեղ հանդէսները, բազմա- թիւ ծառաները, հյուսկապ ապարանքնե- րը, ձիերն ու կառքերը՝ ամենուն իր բո- լոր բաղձանքները կատարելու փոյթը. այս ամենայն իրեն համար երազի մը պէս կու գար. բայց այնպիսի երազ մը, որմէ ուրիշ բան չէր մնացած, բայց եթէ վշտալից յիշատակներ:

Յանկարծ մօրը կերպարանքը մտացն առջեւ կը ներկայանայ, եւ միտքն աւելի եւս կը խուսվէ: Ո՛ սիրելի մայր, կ'ըսէ ինք իրեն, շատ անգամ տեսած եմ որ տառապեալ հիւանդի մը կիւր ըլլալու համար՝ անոր անկողնոյն քովը կեցած, քաղցր խօսքերով զինքը կը մխիթարէի. որչափ ցաւ կը զգայիր արդեօք՝ եթէ սի- բելը որդիդ աս տուրիչ աւազին վրայ թող արուած տեսնէիր...:

Ի՞նչ ապիրատութիւն գործեցի որ այսպէս ամենէն լքեալ թողեալ մնամ...: Ո՛հ, ալ պիտի չկարենամ բարեկամի մը ձեռքը թօթուել. կարող պիտի չըլլամ սիրելի մօր կերպարանքը տեսնել...: Ի վերայ այս ամենայնի ջնջ ալ հոս է. ինքն ալ տղայութեան ատեն իմ բնակած կողմերս ապրած է, մի եւ նոյն հովանաւոր ոստերուն տակ հանգչած է...: Ո՛ մայր իմ, զքեզ տեսած ու զքեզ ճանչցած է...: Գէթ կենացս վերջի հառաչանքնե- րը լսէր, որպէս զե կարող ըլլար օր մը քեզի իմ ինչ կերպով մեռած ըլլալս պատ- մել...: Քեզի եւ հօրս բռէր որ զձեզ եր- կուքնիդ յիշելով մեռայ...: Բայց չէ...: Անիկալ... երբեք...: Կարելի է զիս աս վիճակին մէջ տեսնելու ալ ըլլայ, փոխա- նակ վրաս զթաղու՝ իր անպատշաճ վար- մունքովը վշտերուս աւելի եւս սաստկա- նալուն պատճառ կ'ըլլայ:

Քո՞վ միայն շուն մը կայ...: Ինչ՞ ա- նասուն... քու հաւատարմութիւնդ ինձի օգուտ մը չունի:

Ալ չընալով քայլի եւ ոչ ալ կի-

ղիչ տաքութիւնը տանիլ, հազիւ թէ սո- զալով կրցաւ այլը դառնալ: Բայց այն- չափից տաք ու նեղացուցիչ էր ներսի ելը, որ անմիջապէս ուղեց նորէն դուրս ելլել: Սակայն տկարութիւնն ալ ան աստի- ճանի սաստկութեան հասած էր, որ չկր- ցաւ, եւ հոն գետինն ինկաւ մնաց:

Ան ատեն յառաջուքն աւելի սոսկալի խորհուրդներ մտքը գալով սկսան զինքը խուսվել: Ար զգար որ մեռնելու վրայ է. բայց միանգամայն կը տեսնէր որ մահուան պատրաստուած չէ: Տղայութենէ վեր ստրված քրիստոնէական ճշմարտութիւն- ները սաստկութեամբ մտացը մէջ արթնե- ցան: Կարողս անկոն մեծցած չէր, սա- կայն կրօնին պարտքերը կատարելու փոյթ չէր ըրած, ինչպէս որ սովորաբար ունայ- նասէր եւ անխոհեմ երիտասարդներու կը պատահէր: Արդ նոյն որոշիչ վայրկենին մէջ զինքը սաստիկ կը զարհուրեցնէր Աստուծոյ դատաստաններուն երկիւ- ղը, որոնց վրայ բոլոր կենացը մէջ խիստ քիչ անգամ մտածած էր: ՉԱստուած շատ անգամ վշտացնելը միտքն ինչպիսի մը ան աստիճանի վախ կ'իմանար, որ եթէ բոլոր աշխարհքն իրեն ըլլար, սիրով կու տար, որպէս զե մահուան պատրաստուե- լու համար ձեռք բերէ այն ժամանակին մէկ մասը, զորն որ առողջութեան ատեն այնպէս գէշ գործածած էր:

Դառն ցաւով միտքը կը բերէր իր հպարտութիւնը, ամբարտաւանութիւնն ու անողբ բնաւորութիւնը: Փիլիպպոսին դէմ ըրածներն ալ խզճմտասացը վրայ անտանելի բեռն մը պէս կը ծանրանային: Անցած ժամանակը ետ դարձնել կ'ու- ղէր. բայց առիկայ իր կարողութենէն վեր էր, եւ յոյս չուներ ապագային մէջ ժա- մանակ ունենալու: Միայն ներկան կար ձեռքը. բայց ի՞նչ օգուտ, տեսնող բոլոր զգայարանքներն ու խեցքն անանկ գրաւած ու խուսված էր, որ չէր կրնար մտադրու- թեամբ ու հանդարտութեամբ արժեքը ը- նել: Գիտէր որ յաւիտենականութիւն մտնելու վրայ է, սակայն բողբոջներն ու ժա- մերը կ'անցնէին, եւ իր միտքն արթնու- թեան ու զառանցութեան մէջ վարանած կը ծփար:

Ֆիլիպպոսին ցաւերն ալ սաստիկ էին: Մարտափելի տեսիլն պատճառաւ ծարաւը քիչ մը մեղմացնելու ալ միջոց չու- նէր: Քովի ջուրներկայն ատենէ վեր սպա- ռած էր, եւ նորէն բերելու զօրութիւն չուներ:

Աս կերպով անտանելի ցաւերով եւ նիւթական ու բարոյական սաստիկ նե- ղութիւններով անցուց բոլոր գիշերը, որն որ իրեն երկայն դարբերու պէս եկաւ:

Հետեւեալ առաւուռն կատարեալ թմրութեան ու զառանցութեան մէջ ինկած էր, եւ զինքն արթնցնելու հա- մար կատար հաւատարիմ՝ շան լրած բո- լոր գգուանքները պարագի կ'եկէին: